# ԺՈՂՈՎՐԴԻ ՅՈԹ ՔԱՋՈՐԴԻՆԵՐԸ

Շրայյա ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

«Ավետաբերները» գիրքը, որը լույս է ընծայել «Պարբերական» հրատարակչությունը, հայ ազգային հերոսների դիմանկարների ժողովածու է: Գրքի՝ «Յոթ նվիրյալ» խորագրով առաջաբանում կարդում ենք. «Նրանք յոթն էին»: «Յոթը» հայ բանահյուսության մեջ ընտրյալ թիվ է: Յոթն անգամ գլուխներս խոնարհենք նրանց հիշատակի առջեւ, յոթն անգամ գլուխներս բարձր պահենք, յոթն անգամ ամոթի ու խեղճության քրտինքը սրբենք մեր ճակատներից, յոթն անգամ կրկնենք եւ մեկընդմիշտ հասկանանք «Սահման քաջաց՝ զենք յուրեաց»:

Գիրքն այն յոթ հայ քաջորդիների մասին է, ովքեր հանուն ազգի ազատության ու անկախության իրենց կյանքը դրեցին հայրենիքի զոհասեղանին եւ հետմահու արժանացան հերոսի կոչման:

1990 թվականի հունվարի 19-ի ցրտաշունչ ու մառախլապատ առավոտյան, Նախիջեւանին սահմանամերձ շրջանում, թշնամուն բարձունքից քշելու գործողության պահին ընկավ «Անկախության բանակ» ջոկատի հրամանատար, ազգային գործիչ, արվեստագետ Մովսես Գորգիսյանը: Նա ընդամենը քսանինը տարեկան էր: Ժողովածուում զետեղված «Նվիրաբերում» խորագրով առաջին ակնարկը նվիրված է նրան: Սեղմ ու արտահայտիչ տողերից հառնում է ազգային գործչի, արվեստագետի, զորականի, վառ անհատականության կերպարը:

«Անավարտ հերոսավեպ» խորագրով հայորդ ակնարկի հերոսը հայ ազատագրական նորագույն շարժման ականավոր գործիչ, Ղարաբաղի Մարտունու շրջանի պաշտպանական հրամանատար, փոխգնդապետ, հրապարակախոս եւ հնագետ Մոնթե Մելքոնյանն է: Օվկիանոսից անդին, հեռավոր Կալիֆոռնիայում ծնված հայորդին իր կոչումը տեսավ հարազատ ժողովրդին ծառայելու մեջ եւ իրեն ամբողջովին նվիրեց հայրենիքի ազատագրման սրբազան պայքարին: Եվ ընկավ իմացյալ մահով: Մոնթե Մելքոնյանի անունը ընդմիշտ գրանցվեց հայ ժողովրդի բազմադարյա պատմության հերոսամատյանում:

Ահա եւ հանրապետության նախագահի մեկ այլ հրամանագիր.

«Հայաստանի Հանրապետության պաշտպանության գործում մատուցած համազգային նշանակության բացառիկ ծառայությունների համար, Հայաստանի Հանրապետության գերագույն խորհրդի պատգամավոր, ազատամարտիկ Վիտյա Այվազյանին հետմահու շնորհել «Հայաստանի ազգային հերոս» Հայաստանի Հանրապետության բարձրագույն կոչումը՝ հանձնելով հայրենիքի շքանշան:

Նույն օրվա նույնանման հրամանագրով Հայաստանի ազգային հերոսի կոչման է արժանացել նաեւ Աշտարակի երկրապահ ջոկատի հրամանատար Գեղազնիկ Միխայելյանը:

Հայկական բանակի առաջին նվիրյալ ռահվիրաներից էր Ջիվան Աբրահամյանը, որն իր կյանքի վերջին մարտն ընդունել է 1991 թվականի հուլիսի 20-ին: Հայ քաջորդու կյանքի եւ մարտական սխրանքների մասին է պատմում «Վերջին ճակատամարտը» ակնարկը:

ԼՂՀ թիվ 46496 հետեւակի մարտական մեքենայի հրամանատար Յուրա Պողոսյանը նահատակվեց 1992 թվականի հունիսի 12-ին՝ Ասկերան-Նախիջեւանիկ ճակատային գծում:

Արցախի կանոնավոր բանակի կազմավորման առաջին օրերից նրա ղեկավարած վաշտը միշտ հայտնվում էր պատերազմի ամենաթեժ կետերում: Անձնուրաց այս քաջորդուն եւս հետմահու շնորհվել է Հայաստանի ազգային հերոսի կոչում:

Թալինի շրջանի Արեգ գյուղից Արցախի հյուսիսային դարպաս Գետաշեն բնակավայր էր հասել երկրապահ ջոկատի հրամանատար Թաթուլ Կրպեյանը: Երկու լեռնային գյուղեր՝ Մարտունաշենն ու Գետաշենը կանգնում են գերտերության՝ Խորհրդային Միության ռազմական զորության առջեւ: Թաթուլ Կրպեյանն անօրինակ սխրանքով պատանդ է վերցնում հակառակորդի հրամանատարին: Շատ չանցած՝ նենգ թշնամու խարդավանքին զոհ է դառնում անձնվեր մարտիկը:

Ժողովրդի արժանավոր զավակի կյանքն ու ռազմական սխրանքը բյուրեղացել են «Զենքը կգտնի տիրոջը» ակնարկի հետեւյալ տողերում. «Առասպելները հորինում են ժողովուրդները: Անզորությունից: Նրանք այդպես են փրկում իրենց երազները, հույսերը, ձգտումները, գալիք սերունդներին փոխանցում: Իսկ հետո ծնվում են շատ սովորական, ավելի քան արտասովոր մարդիկ եւ իրականացնում այդ երազները, ինչպես Թաթուլ Կրպեյանը»:




Գրքում զետեղված «Շուշիի ազատագրումից հետո, մայիս, 1992թ.», «Հայրենիքի պաշտպանները», «Հանրապետության հրապարակ՝ Հայաստանի անկախության 5-րդ տարեդարձին նվիրված զորահանդես», «Պատմության ակնթարթներ», «Հայ-ռուսական համատեղ զորավարժություններ», «Երդում», «Դրոշի հանձնում՝ սահմանապահի օրվա առթիվ», «Հզորացող բանակ», «Զորավարժություններ», «Բարձունքը մերն է...» լուսանկարների հավաքածուն ավելի բովանդակալի ու արժանահավատ է դարձնում «Ավետաբերները» ժողովածուն:

Հայ յոթ քաջորդիներին նվիրված գիրքը կազմել է Գրիգոր Ջանիկյանը: